ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

18.08.2025 18:01

2025 թվականի օգոստոսի 18-ին ՀՀ փաստաբանների պալատը ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ աշխատաժողով է իրականացրել Լոռու մարզի փաստաբանների համար:

Աշխատաժողովի ընթացքում բանախոսությամբ հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու Սիմոն Բաբայանը:

Փաստաբանների հետ քննարկվել են Հայաստանյան փաստաբանության արդի խնդիրները և դրանց ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման համատեքստում, փաստաբանի հաղորդակցության առանձնահատկությունները, կարգապահական վարույթների իրավակիրառ պրակտիկայի զարգացումները և փաստաբանության ոլորտին առնչվող այլ խնդիրներ և առանցքային հարցեր:

Աշխատաժողովը կազմակերպվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })